ռանգաւոր 'ի միջոց երեսուն աւուր ժամանակի ընտրեսցի տեղակալ նորայ 'ի ցեղէ նոյնոյ առն, այլ եթէ ունիցի անդրանիկ, և կամ երէց որդի միոք այլոց, եթէ ոչ կարող է ընտրել 'ի յարենէ նորայ, այս մտածութեան եթէ ժամանակ ընդ ժամանակս յապա ծնցի որդի, նայ լինիցի ժառանգ, զի տեղի նախարարի մերոյ մի՛ մնասցէ դատարկ։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Եթէ գուցէ զի նախարարութիւնն Հայաստանեաց լինիցի ժառանգաւոր որդիք նախարարին մերոյ կարէ մտանել 'ի պաշտօն իշխանութեան, այսպէս երէց որդին 'ի պաշտօնս տեղակալութեան հօր, այսինքն նախարարութեան երկրորդ, երրորդ և չորրորդ որդիքն կարէ ստանալ պաշտօն երկրորդ սպարապետութեան և երկրորդ ասպետութեան և երկրորդ հրաձանի պետութեան, հնազանդ իւրաքանչ առաջնորդին իւրոյ, զամենայն աւուրս կենաց իւրոց, սոքայ ժառանգորդքս երբէք մի՛ ստանայցեն պաշտօն առաջին, ո՛չ սպարապետութեան, ո՛չ ասպետութեան և ո՛չ հրաձայնպետութեան, և սոքա ժառանգորդքս պարտեն հատուցումն առնել ինաս զործոց ձեռաց իւրեանց ըստ համեմատութեան Օրինացն Հայոց։